



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

24 մարտի 2022 թվականի թիվ 42-Ա
ք. Երևան

ՀԱՆՐԱՅԻՆ ՄՈՒԼՏԻՊԼԵՔՍՈՒՄ ՍԼՈԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԱՅԻՆ ՍՓՈՒՄԱՆ ՄԻՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 44-րդ հոդվածի 1-ին, 5-րդ մասերի, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2020 թվականի սեպտեմբերի 8-ի «Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթի անցկացման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» թիվ 94-Ն որոշմամբ հաստատված կարգի դրույթներով և հիմք ընդունելով ՀՀ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 2022 թվականի փետրվարի 25-ի թիվ 01/11.1/1282-2022 գրությունը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշում է.**

1. 2022 թվականի մարտի 24-ին հայտարարել հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մայրաքաղաքային սփուման մրցույթ:

2. Հաստատել հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մայրաքաղաքային սփուման մրցույթի մասին տեղեկատվությունը՝ համաձայն Հավելվածի:

3. Հրապարակել մրցույթի մասին տեղեկատվությունը Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների www.azdarar.am և Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի www.tvradio.am պաշտոնական ինտերնետային կայքերում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մայրաքաղաքային սփռման մրցույթի մասին

1. Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը՝ հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործում.
2. Սփռման տարածքը՝ ք. Երևան.
3. Սլոթերի քանակը՝ 1.
4. Մրցույթին մասնակցելու համար ներկայացվում է՝
 - 1) հայտ (ձևը կցվում է),
 - 2) փաստաթուղթ՝ տեսալսողական մեդիաձառայություն մատուցողի նախանշված նպատակների իրագործման հիմնական ուղղությունների և միջոցառումների ընդհանրական նկարագրի վերաբերյալ՝ անդրադառնալով հետևյալ չափանիշներին՝
 - սեփական արտադրության հաղորդումներին,
 - հայերեն հաղորդումներին,
 - բազմակարծությանը,
 - հայտատուի տեխնիկական և ֆինանսական հնարավորություններին,
 - աշխատակազմի մասնագիտական պատրաստվածությանը,
 - ազգային, համամարդկային, հոգևոր, մշակութային մնայուն արժեքների ճանաչողությանն ու ամրապնդմանն ուղղված հաղորդումներին,
 - գործող լիցենզավորված տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների դեպքում՝ գործունեության իրականացման ընթացքում լիցենզավորման հայտով ստանձնած պարտավորություններին,
 - 3) ֆինանսական աղբյուրները հիմնավորող փաստաթղթեր,
 - 4) տվյալներ օգտագործվելիք տեխնիկական միջոցների վերաբերյալ,
 - 5) տեղեկություններ աշխատակազմի քանակի, նրանց կրթության և մասնագիտության վերաբերյալ,
 - 6) էթիկայի կանոնագիր,
 - 7) էթիկայի կանոնագրի դրույթների ապահովման ինքնակարգավորման միջոցները,

8) մրցույթին մասնակցելու համար 900005164596 հաշվեհամարին «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված 400 000 ՀՀ դրամ պետական տուրքի վճարումը հավաստող անդորրագիրը:

5. Հայտին կից փաստաթղթերը ներկայացվում են երեք նույնական փաթեթով՝ յուրաքանչյուրը թելակարված, համարակալված, վերջին թերթի հետնամասում, կարի վրա փակցված պիտակով՝ «Բաղկացած է ... թերթից» գրառմամբ («...» նշվում է թերթերի քանակը), ստորագրված և կնքված (կնիքի առկայության դեպքում): Փաթեթները ներկայացվում են փակ ծրարով՝ ստորագրված և կնքված (կնիքի առկայության դեպքում):

6. Հայտերն ընդունվում են 2022 թվականի ապրիլի 25-ից մինչև մայիսի 16-ը ներառյալ, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը 9:00-18:00-ն: Հայտերը և կից փաստաթղթերն անհրաժեշտ է ներկայացնել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով՝ ՀՀ, ք. Երևան, Իսահակյան 28 հասցեով:

7. Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար զանգահարել 010 52 94 06 հեռախոսահամարով կամ գրել licensing@tvradio.am էլ. փոստի հասցեով:

Հ Ա Յ Տ

Մլրթի օգտագործման լիցենզավորման մրցույթին մասնակցելու

Հայտատուի անվանում _____

Գտնվելու/հաշվառման վայրը _____

Պետական գրանցման/հաշվառման համարը _____

Հեռախոսահամարը, էլ. փոստի հասցեն _____

Միման տարածքը _____

Տեղեկություն հեղինակագործման վերաբերյալ _____

Հաստատում եմ «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 15-րդ հոդվածում նշված սահմանափակումների բացակայությունը:

Կից փաստաթղթեր՝ _____ թերթ:

Հայտատու _____
(անուն, ազգանուն)

_____ (ստորագրություն)

Կ.Տ. (կնիքի առկայության դեպքում)

_____ (օրը, ամիսը, տարեթիվը)